ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ֆինանսների նախարարության սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ Նաիրա Մկրտչյան

Ես՝ Նաիրա Մկրտչյանս, 2024 թվականի մայիսի 2-ի N 28 պայմանագրի համաձայն որպես փորձագետ աշխատում եմ ՀՀ Ֆինանսների նախարարության սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում:

2024 թվականի փետրվարի 6-ից մինչև 2025 թվականի մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Բյուջետային գործընթացի շրջանակներում վարչության իրավասությունների շրջանակներում սոցիալական ծրագրերի գծով պետական կառավարման մարմիններից ստացված պետական միջնաժամկետ ծախսերի (ներառյալ 2025 թվականի բյուջետային տարվա) ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերի վերլուծություն, ՀՀ պետական բյուջեի ելքերի ֆինանսական ծրագրավորում և բյուջետային փաթեթի ամբողջական փաստաթղթի ամփոփման ու ներկայացման աշխատանքներին մասնակցություն:

2. Միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների, Նախարարության այլ ստորաբաժանումների գրություններում բարձրացվող տարբեր հարցերի, ինչպես նաև ստացված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացում:

3. ՀՀ պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով իրականացվող հատկացումների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

ՀՀ ֆինանսների նախարարության
սոցիալական ծրագրերի բյուջետային
գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ

Նաիրա Մկրտչյան

05.05.2025թ.